ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1330-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի, 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հետ վերցնել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ ՊՈԱԿ) ամրացված՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամություն 2 հասցեի 1-ին հարկում գտնվող 235.82 քառ. մ մակերեսով անշարժ գույքից 17.52 քառ. մ մակերեսով և 15.81 քառ. մ մակերեսով անշարժ գույքերը և ամրացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

2. Հետ վերցնել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին ամրացված՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 2

հասցեի 1-ին հարկում գտնվող 121.58 քառ. մ մակերեսով անշարժ գույքը և ամրացնել ՊՈԱԿ-ին:

3. Հետ վերցնել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի օգոստոսի 25-ի N 573 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին անհատույց օգտագործման հանձնված՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 2 հասցեի 1-ին հարկում գտնվող 155.98 քառ. մ մակերեսով անշարժ գույքը և ամրացնել ՊՈԱԿ-ին՝ հիմք ընդունելով չափագրության արդյունքները:

4. Սույն որոշման 3-րդ կետից բխող Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 2 հասցեի 1-ին հարկում գտնվող 155.98 քառ. մ մակերեսով անշարժ գույքի չափագրության և պետական գրանցման ծախսերն իրականացնել ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-3-րդ կետերում նշված անշարժ գույքերի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ